ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
NAIRA VARDANYAN

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալական կապիտալի ուսումնասիրությունը տարածված և արդիական է ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Սոցիալական կապիտալի հայեցակարգի էությունը կայանում է այն համոզման մեջ, ըստ որի անհատի ներգրավվումը խմբի մեջ կարող է ունենալ մի շարք դրական հետևանքներ ինչպես իր, այնպես էլ խմբի և հանրության համար: Սոցիալական կապիտալը ռեսուրս է, որն իր մեջ ներառում է մարդկային հարաբերությունների ցանցերը, ինչը մարդկանց օգնում է ավելի հեշտ հասնել իրենց նպատակներին և հեշտացնում է կյանքը: Սոցիալական կապիտալն իր մեջ ներառում է սոցիալական ցանցերի հիմքում ընկած փոխօգնության ու վստահության նորմերի ու արժեքների ամբողջությունը: Առանց սոցիալական կապիտալի հնարավոր չի հասարակությունը կանգնեցնել զարգացման ճիշտ ուղղու վրա, կերտել քաղաքացիական հասարակություն, քանի որ առանց վստահության, ինչպես միմյանց, այնպես էլ հասարակական և քաղաքական ինստիտուտների ու կառավարության նկատմամբ, հասարակության անդամները չեն ցուցաբերի անհրաժեշտ քաղաքական ակտիվություն ու մասնակցություն: Առանց տարբեր տիպի սոցիալական ցանցերի գոյության, դրանցում հարաբերությունների ակտիվության, հասարակության անդամների մոտ չի առաջանա միմյանց օգնելու, միասին առաջ գնալու ցանկությունը:

Քաղաքագիտության տեսանկյունից սոցիալական կապիտալը քննարկվում է մարդկանց կողմից միմյանց, տարբեր հասարակական, քաղաքական և այլ տիպի կառույցների նկատմամբ վստահության առկայության կամ բացակայության տեսանկյունից: Հաճախ որպես հավելյալ գործոն հաշվի է առնվում նաև ընտրությունների ժամանակ քաղաքացիների կողմից ցուցաբերված ակտիվությունը, անդամությունը քաղաքական կուսակցություններին, մասնակցությունը տարբեր տիպի քաղաքական միջոցառումներին և նման այլ տվյալներ, որոնք մատնանշում են քաղաքական և քաղաքացիական ակտիվության մակարդակը: Հայտնի ֆրանսիացի քաղաքական սոցիոլոգ Պ. Բուրդյեն սոցիալական կապիտալը դիտում է որպես իրական կամ պոտենցիալ ռեսուրսների ամբողջություն, որոնք ստեղծվում են քիչ թե շատ ինստիտուցիոնալացված սոցիալական

կապերի, հարաբերությունների ցանցերի առկայության միջոցով, կամ այլ կերպ ասած, տարբեր խմբերում անդամակցության արդյունքում:[1]

Սոցիալական կապիտալի առաջին սահմանումներից մեկը տվել է Լ.Ջ. Հանիֆանը դեռ 1916թ-ի իր հրատարակած հոդվածում: Վերջինս այն սահմանում է որպես "նյութական, իրական հիմք, որը հաշվի է առնվում մարդկանց առօրյա կյանքում, այսինքն լավ կյանքը, ընկերությունը, փոխըմբռնումը և սոցիալական հաղորդակցությունը ընտանիքի անդամների և այն մարդկանց հետ, ովքեր կազմում են քո սոցիալական հանրությունը":[2] Այս հասկացությունը ավելի լայն տարածում է ստացել Ջ. Քոլմանի, Պ. Բուրդիեյի, Ֆ. Ֆուկույամայի և Ռ. Պատնամի աշխատանքներից հետո: Հեղինակներից ոմանք սոցիալական կապիտալի սահմանման ժամանակ շեշտադրում են անհատական նպատակներն ու շահը, իսկ մյուսները՝ խմբայինը: Եվ ըստ դրա էլ առանձնացնում են սոցիալական կապիտալի սահմանումների դասակարգման երկու տեսակ. առաջինը՝ կոլեկտիվ շահը ապահովող, երկրորդը՝ անհատական: Առաջինի դեպքում սոցիալական կապիտալի մեջ մտնում է այնպիսի սոցիալական կազմակերպությունների բնութագրիչներ, ինչպիսիք են ցանցը, նորմերը և վստահությունը, որոնք ապահովում են համագործակցության համար անհրաժեշտ պայմանները՝ փոխադարձ համաձայնության հասնելու համար: Որպես անհատական շահն ապահովող երևույթ, սոցիալական կապիտալը ենթադրում է ռեսուրսի կոնկրետ ձև, որը նախատեսված է անհատի համար, և այն գտնվում է միջանձնային հարաբերություններ կառուցվածքում: Այս դեպքում ենթադրվում է անդամությունը որոշակի խմբերում, ինչը յուրաքանչյուրին որոշակի ռեսուրսով է ապահովում՝ հետագա առաջխաղացման համար:[3]

Սոցիալական հարաբերությունների ցանցերի գաղափարը կենտրոնական է՝ սոցիալական կապիտալի սահմանման մեջ: Առանձնացնում են ցանցերի ուսումնասիրության 2 մոտեցում: Առաջինը անձակենտրոն (էգոցենտրիկ) մոտեցումն է, որը դիտարկում է ցանցը՝ որպես անձնական շահերի իրականացման միջոց, իսկ երկրորդ մոտեցման ժամանակ ընդհակառակը, առաջնային տեղ է տրվում հենց ցանցին և դրա զարգացման ու փոփոխության ուսումնասիրությանը: Ցանցը սահմանվում է որպես անհատական հարաբերությունների ամբողջություն, որոնք ձևավորվում են ընտանիքում, աշխատավայրում, տարբեր կազմակերպություններում, ֆորմալ և ոչ ֆորմալ շփումների արդյունքում: Առանձնացնում են է *ֆորմալ և ոչ ֆորմալ, ուղղահայաց և հորիզոնական,լոկալ*

---

[1] *Տե՛ս* П. Бурдье "Социология политики"

[2] *Տե՛ս* ICT and Social Capital : Setting the Scene.// Workshop on ICTs and Social Capital in the knoweledge Society 2003

[3] *Տե՛ս* Field J. and Falk I. Social Capital: An analytical tool for exploring lifelong learning and community development. 2001

և գլոբալ, բաց և փակ, խիտ և նոսր, հոմոգեն ու հետերոգեն սոցիալական ցանցեր:[4]

Սոցիալական ցանցերի տարբեր ձևերին բնորոշ են սոցիալական կապիտալի տարբեր ձևեր: Առանձնացնում են սոցիալական կապիտալի հետևյալ տիպերը. կապող, կամրջող և շղթայող:

Կապող սոցիալական կապիտալը բնորոշ է ավելի սերտ հարաբերություններին և նկարագրում է ավելի ուժեղ կապերը, ինչպիսիք են ընտանիքի անդամների միջև հարաբերությունները, ընկերական խմբում հարաբերությունները, նույն էթնիկ խմբի անդամների միջև հարաբերությունները:

Կամրջող սոցիալական կապիտալը նկարագրում է ավելի թույլ և ավելի հեռու հարաբերությունները: Այս տիպի սոցիալական կապիտալը բնորոշ է աշխատանքային վայրերում առաջացած շփումներին, տարբեր էթնիկ խմբերին պատկանող ընկերների հարաբերություններին:

Շղթայող սոցիալական կապիտալը բնութագրում է հիերարխիայի տարբեր մակարդակներում գտնվողների հարաբերությունները, այս հարաբերությունները հիմնվում են իշխանության և ենթակայության հարաբերությունների վրա:[5] Առավել շատ կապող սոցիալական կապիտալի տիրապետողները ավելի հեշտ և արագ են կարողանում իրականացնել իրենց նպատակները և լուծել առաջացած խնդիրները: Սակայն սոցիալական կապիտալի մյուս տիպերը նույնպես իրենց աջակցող դերն ունեն խնդիրների լուծման և շահերի իրականացման ժամանակ: Սա հիմնականում կախված է նրանից, թե ինչ տիպի հիմնախնդրի, նպատակի հետ գործ ունենք: Հնարավոր են դեպքեր, երբ հենց շղթայող սոցիալական կապիտալն ավելի զգալի և նշանակալի ազդեցություն է ունենում:

Սոցիալական կապիտալը քննարկվում է միկրո, մեզո և մակրո մակարդակներում: Միկրոմակարդակը նույնականացվում է Ռ. Պատնամի տեսության հետ, որը սոցիալական կապիտալը դիտում է որպես սոցիալական կազմակերպության առանձնահատկություններ, ինչպիսիք են ցանցը, նորմերն ու վստահությունը, որոնք հեշտացնում են կոորդինացիան համակարգում և համագործակցությունը՝ փոխադարձ շահերի իրականացման համար: Նա իր աշխատանքում ուսումնասիրում է ամերիկյան բնակչության անդամությունը տարբեր կազմակերպություններում, խմբերում, և կախված դրանից վստահության աստիճանը բնակչության մոտ: Այսինքն, Պատնամը սոցիալական կապիտալը դիտարկել է որպես միջանձնային հարաբերությունների արդյունքում ձևավորվող

---

[4] *Տե՛ս* Stone Wendy, Measuring social capital: Towards a theoretically informed measurement framework for researching social capital in familyand community life. Research Paper No. 24, 2001

[5] *Տե՛ս* Stone Wendy and Hughes Jody, Social capital Empirical meaning and measurement validity, Research Paper No. 27, 2002

երևույթ և քննարկել է միջանձնային վստահությունը: Սակայն այս տեսակետի հետ կարելի է չհամաձայնվել, քանի որ սոցիալական կապիտալի վրա մեծապես ազդում են նաև այնպիսի կառույցներ, որոնց անհատը չի անդամակցում, օրինակ՝ պետական և ոչ պետական տարբեր ինստիտուտներ: Նաև սոցիալական կապիտալի շրջանակներում պետք է խոսել ոչ միայն միջանձնային վստահության մասին, այլ նաև վստահություն տարբեր կառույցների և հենց պետության նկատմամբ: Մեզո մակարդակի մասին խոսելիս պետք է նշել Զ.Քոլմանի սահմանումը, որը սոցիալական կապիտալը դիտում է որպես անհատների միջև հորիզոնական հարաբերությունների ամբողջություն, բայց ավելի հաճախ խումբ - խումբ հարաբերություններ: Այս մոտեցումն էլ ունի իր թերությունները, քանի որ նույնպես բացառում է ավելի բարձր մակարդակի հարաբերություններն ու դրանց ազդեցությունը սոցիալական կապիտալի վրա: Մակրոմակարդակում մենք գործ ենք ունենում մշակույթի և հասարակական ինստիտուտների հետ: Այստեղ խոսքը գնում է սոցիալական և քաղաքական միջավայրերի մասին՝ որոնց միջոցով կերտվում է հասարակության սոցիալական կառուցվածքն ու նորմերը՝ հետագա զարգացման համար: Կարելի է նկատել, որ այս մոտեցումներից յուրաքանչյուրն էլ ունի իր թերությունները, և որոշակի խմբի, հանրության կամ հասարակության սոցիալական կապիտալի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար պետք է համադրել այս երեք մոտեցումները:

Սոցիալական կապիտալի ուսումնասիրության ժամանակ կենտրոնական են *վստահության և փոխադարձության նորմերի* ուսումնասիրությունը: Հասարակության անդամների մոտ վստահության մակարդակի ուսումնասիրության ժամանակ պետք է առանձնացնել *ուղղահայաց և հորիզոնական* վստահություններ: Ուղղահայաց վստահությունը վերաբերվում է կառավարության, տեղական իշխանությունների նկատմամբ եղած վստահությանը, այսինքն այն դեպքերին, երբ գործ ունենք անհավասար հարաբերությունների կամ իշխանության և ենթակայության հարաբերությունների հետ: Հորիզոնական վստահության մասին խոսում ենք այն ժամանակ, երբ առկա են հարաբերություններ հավասար կարգավիճակների միջև: Հորիզոնական է ընտանիքի, ընկերների, մարդկանց, հարևանների նկատմամբ եղած վստահությունը: Ուղղահայաց վստահությունն ավելի պատկերավոր է դառնում քաղաքական ընտրությունների ժամանակ, երբ հասարակության վստահության մակարդակը կարելի է տեսնել թվերի տեսքով: Այստեղ, իհարկե, պետք է քննարկել նաև այն, թե որո՞նք են ընտրություն կատարելու հիմնական դրդապատճառները, ո՞ր ցանցերի ազդեցությունն է առավել զգալի այս գործընթացի ժամանակ: Ի վերջո կարելի է նկատել, որ ուղղահայաց վստահության հիմքում հաճախ հորիզոնական վստահությունն է: Կա վստահության դասակարգման մեկ այլ եղանակ, երբ առանձնացնում են անհատականացված, ընդհանրացված և ինստիտուցիոնալ

վստահություններ:[6] Անհատականացված վստահության մասին խոսելիս ի նկատի ենք ունենում վստահությունը կոնկրետ մարդկանց նկատմամբ: Ընդհանրացված վստահությունը վերաբերվում է կոլեկտիվ միավորներին. օրինակ, վստահություն մարդկության,որոշակի էթնիկ խմբի, կուսակցության նկատմամբ: Քաղաքացիական կամ ինստիտուցիոնալ վստահությունը կապված է պետության և նրանում գործող ինստիտուցիոնալ համակարգերի հետ: Կախված հետազոտման նպատակներից ու խնդիրներից՝ ուսումնասիրության ժամանակ շեշտադրվում է վստահության այս տիպերից որևէ մեկը:Այստեղ կարելի է որոշակի հիերարխիա նկատել: Ընդհանրացված վստահության հիմքում կարելի է տեսնել անհատականացվածը, իսկ ինստիտուցիոնալի հիմքում՝ մյուս երկուսը:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է ասել, որ սոցիալական կապիտալի առկայությունը ժողովրդավարական հասարակարգի և քաղաքացիական հասարակության կերտման համար անհրաժեշտ պայմաններից մեկն է հանդիսանում: Ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ստեղծումը յուրաքանչյուր պետության գերնպատակն է հանդիսանում, սակայն դրա համար անհրաժեշտ է, որպեսզի հասարակության անդամների համար այս նպատակը նույնպես արժեքավոր լինի: Կարևոր է ապահովել հասարակության անդամների վստահության, փոխօգնության, տարբեր ցանցերում ներգրավվածության և մասնակցության պատշաճ մակարդակը, սակայն դա չպետք է բերի անարդարության աճին, անձնական շահի գերակայությանը, օրենքի շրջանցմանը և այլ բացասական երևույթների, ինչը նույնպես սոցիալական կապիտալի լայն կիրառման արդյունք է հանդիսանում:

Սոցիալական կապիտալի խորը ուսումնասիրությունը թույլ կտա ունենալ հասարակության ընդհանուր նկարագիրը, ինչի արդյունքում կարելի կլինի հասարակական գիտակցության փոփոխության համար առավել արդյունավետ միջոցներ մշակել՝ ինչի արդյունքում ընդհանուր շահը կգերակայի, կաճի քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը և վստահությունը տարբեր մակարդակներում: Այս դեպքում հնարավոր կլինի ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կառուցումը:

Essence and the content of the social capital

The term "the social capital" has got wide popularity in the end of the XX-th century. The essence of the concept of the social capital consists that the involvement of the individual into social networks helps it to reach the purposes is easier and faster. Presence of high level of the social capital in a society is a basis for democratic state and the civil society. In given article I consider all popular theories of the social capital which authors are P.Burde, J. Coulman, F.Fukujama and R.Patnam. Also here are considered all the components of the social capital, such, as social networks, social communications, norms of dialogue and trust.

---

[6] *Տե՛ս* Stone Wendy , Measuring social capital: Towards a theoretically informed measurement framework for researching social capital in familyand community life. Research Paper No. 24, 2001